Հավելված 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի
«__03__» հոկտեմբերի թիվ 39-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) մասնագիտական գործունեություն իրականացնող և համակարգի զարգացման գործում ավանդ ունեցող անձանց, կազմակերպություններին նախարարության պարգևների ներկայացման և շնորհման ընթացքը:

2. Նախարարությունը պարգևատրում է շնորհակալագրով (Ձև 1), պատվոգրով (Ձև 2) և մեդալներով:

3. Նախարարության պարգևները շնորհվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով:

4. Նախարարության շնորհակալագիր, պատվոգիր տրվում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտում գիտական, մանկավարժական, գիտամանկավարժական, ստեղծագործական, մշակութային, մարզական գործունեություն իրականացնող անձանց, ովքեր բարեխղճորեն և նվիրումով կատարում են իրենց մասնագիտական աշխատանքը, ինչպես նաև սովորողներին, մարզիկներին ու կրթությանը, մշակույթին և սպորտին աջակցող, սատարող անձանց և կազմակերպություններին:

5. Մեդալները տրվում են կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտում զգալի ավանդ, երկարամյա անբասիր աշխատանք ունեցող անձանց, բնագավառի ականավոր գործիչներին, բարերարներին, կազմակերպություններին, ոլորտի զարգացման գործում ակնառու հաջողությունների համար, ինչպես նաև կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտում միջազգային համագործակցության զարգացման գործընթացին նպաստող անձանց և կազմակերպություններին:

6. Նախարարության մեդալներով պարգևատրված անձանց և կազմակերպություններին մեդալների հետ տրվում է նաև հավաստագիր:

7. Պարգևատրման գործընթացի կազմակերպման համար պատասխանատու է նախարարության պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժինը:

8. Նախարարություն պարգևատրման համար միջնորդությամբ դիմելու իրավասություն ունեն ՀՀ նախարարությունները, այլ գերատեսչությունները, ՀՀ մարզպետները (Երևանի քաղաքապետը), ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղարը, օտարերկրյա ուսումնական հաստատությունները, հասարակական և այլ կազմակերպություններ:

9. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը կարող է պարգևատրել սեփական նախաձեռնությամբ:

10. Նախարարության համապատասխան ստորաբաժանումները քննարկում և ամփոփում են պարգևատրման համար ներկայացված միջնորդագիր-դիմումը կամ գրությունը, որի հիման վրա պատրաստվում է զեկուցագիր-առաջարկ՝ նշելով պարգևատրման ձևը (մեդալ, պատվոգիր, շնորհակալագիր):

11. Հիմք ընդունելով զեկուցագիր-առաջարկը՝ պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժինը պատրաստում է հրամանի նախագիծ՝ պարգևատրման մասին:

12. Նախարարության պարգևներով պարգևատրելու վերաբերյալ միջնորդությունը ներառում է՝

1) պարգևատրման ներկայացված անձի բնութագիրը, անձնագրի պատճենը,

2) տեղեկություններ պարգևատրվող կազմակերպության վերաբերյալ:

13. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պարգևի կարող են ներկայացվել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ, կազմակերպություններ:

12. Շնորհակալագրով, պատվոգրով և մեդալներով պարգևատրման համար հաջորդականության պարտադիր պահանջ չկա: Նախարարության մեդալներով կարելի է պարգևատրել՝ շրջանցելով նախորդ 2 ձևի պարգևները:

13. Նախարարության պարգևները հանձնում է նախարարը կամ նրա հանձնարարությամբ համապատասխան պաշտոնատար անձը:

14. Նախարարության մեդալներով միևնույն անձանց և կազմակերպություններին մեկից ավելի պարգևատրում չի կատարվում:

Հավելված 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի
«___03__» հոկտեմբերի թիվ 39-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎՈԳՐԻ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԻ ՁԵՎԵՐԸ

Ձև 1

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА

MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF RA

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎՈԳԻՐ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА

MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF RA

ՊԱՏՎԱՐԻՐ